

## ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՍՆՔ

Գիրքը և պարբերական մամուլը — Պօստահայ գրականութիւնից; Փասիմ և Շաւարչ; — Ռ. Պէրաբերեանի «Խոհ» և Յուշբա: — Մտածողը-բանաստեղծ: — Մեր և օտար գրականութեան նորութիւններ: — Ամսագրների և գրքերի շուրջը:

### Ա.

Վաղուց է այսպիսի ուրախ սրտով և վտու լոյսերով չէի հեռացել ես Կովկասից... Գուցէ ընթերցողը զարմանալ, թէ ինչ կալ ուրախունալու, քանի որ հայ կեանքը վաղուց է միիթարական գործեր չեւ արտադրել: Իրաւունք ունէք, կատասխանեմ ես ես չեմ վիճում, որ հայերս առանձին միիթարական «գործեր» չենք ցոյց տուել վերջին ժամանակներս, բայց այնուամենալիւ, ես ուրախունում եմ, որովհետեւ տեսնում եմ, որ մենք մեռած, դիակնացած չենք իսպառ: Իսկ այդ այժմուալ ժամտնակին մեծ բան է.

Իսկ որ մենք մեռած չենք — ապացոյց մեր գրականութիւնը:

Ես աեսալ և համոզուեցի, որ ասպարիզի վերայ «զիրք» է երևացել. միթէ դա ուրախալի երևոլթ չէ: Գրավաճառների մօտ ի ցոյց են զրուտն նոր գրքեր, տպարաններն զբաղուած են գրքեր տպելով, հեղինակները երկրորդ և երրորդ հրատարակութիւններն են անում ըրենց գրքերի, սրտի բերկրութեամբ լսում ես, որ Խ. Արովեանը սպառել է, Ռ. Պատկանեանինը — քիչ է մնացել, Ռաֆֆիինը մեծ պահանջ կալ, Ահարոնեանինը — երկրորդ տպագրութիւնն է սպառում և ալլն և ալլն: Սա ի՞նչ է. միթէ մտաւոր կենդանութեան ապացոյց չէ: Ես չեմ ասում, որ կարգալը հայերիս համար պահանջ է դառել, ոչ: Ես միայն տեսնում եմ, որ հայ

գերքը ասպարէզ է եկել և մուտք է գործում գիւղերը, քաղաքները, ընտանիքները, երիտասարդական շըրջանները:

Գլխաւորապէս պահանջուում են հայ վիպասանները հին և նորագոյն շըրջանների, բայց տարածուում են և հանրօգուտ, ժողովրդականացրած — գիտական գրքեր էլ: Բագւում լսեցի, որ այնտեղ պահանջ կայ քաղաքաւուսական բովանդակութեամբ գրքելի: բայց ալդպիսիներ մենք գրեթէ չունենք: Սա դեռ սկիզբն է «երկանց»: սակաւ առ սակաւ գիրքը աւ ելի ևս լայն ծաւալով կտարածուի և կմտնի այնպիսի խաւեր, ուր երբէք հայ գերք չի եղել. նա կդառնալ պահանջ — և պէտք կլինի ալդ պահանջին բաւականութիւն տալ, թողուրեմն կարող ոյժերը մտածեն ալդ մասին և վաղօրօք կազմակերպուեն գործելու:

Ո.ո. ալժմ կարող եմ ցոլց տալ հետևեալ աչքի լնկնող պակասութիւնների մասին. ո. գինը թանգ է: Էժանացնելու միակ միջոցը մեծ քանակութեամբ հրատարակելն է. իսկ ալդ անշուշու կարելի է այնպիսի գըրքերի վերար, որոնք արդէն ժողովրդականութիւն են ստացել (Խ. Աբովեան, Բաֆֆէ, Պատկանեան, Պոօշեան և ալլն) ը. Զկան լաւ թարգմանական գրքեր՝ վէպեր, բանաստեղծութիւններ, պատմական գրուածքներ և ալլն. գ. Քիչ են զուտ մանկական և էժմնագին ժողովրդական գրքեր. էժանագին տաելով ես հասկանում եմ մէկից մինչև տասը կոպէկ (Համեմատեցէք Դօնեկայ ԲՇՎԵ-ի հրատարակութիւնները). գ. Զկան ձեռնարկներ՝ աշակերտական, բանուորական, արդիւնաբերական, գործարանական և ալլն. ե. Զկան ցըիչներ, կազմակերպուած չէ գրքերի վաճառման գործը. զ. Գրավաճառները շատ մեծ տոկոս են վերցնում իրեւ կոմիսիա կամ գեղջ \*):

Սա իմ նկատողութիւններս է, որի վրայ կարելի է դեռ շատ ուրիշներն էլ աւելացնել, և որոնց հետ կարելի է, վիճողներ էլ կլինեն. ես ուրախութեամբ կլսէի ուրիշի կարծիքներն էլ ալդ մասին:

\* ) Խոկ ամենից գլխաւորը, որ գրավաճառները, աննշան բացառութեամբ, ամենկին չեն վճարում: ԽՄԲ.

## Բ

Զեմ կարող ասել, որ մեր պարբերական մամուլն էլ նոյնախի կենդանութիւն է ցոյց տալիս, ինչպէս և գերքը Ընդհակառակը, այս ըոպէիս ղեկավարող ոյժը տեղափոխուել է մամուլից գերքը:

Մինչև այժմս մեր մէջ պարբերական մամուլը գրքի գերն էլ էր կատարում. այժմ տեղի է ունենում աշխատանքի բաժանումն և մեր մամուլին կմնայ անել այն, ինչ որ անում է ամեն մի ուրիշ ազգի մամուլ։ Մեր թերթերը և ամսագրերը պէտք է զբաղուեն որուայ հարցերով, պէտք է ուղղութիւն տան, պէտք է մտաւոր կենդանութեան սլաքագլուխներ լինեն, նոր մտքերի ու գաղափարների, ծրագրների ասպարէզ լինեն, նոր ոյժեր առաջ քաշեն, հարցեր վճռեն, վէճեր լուծեն։ Եւ այս բոլորը պէտք է կատարուի հրապարակախօսութեամբ, գեղարուեստական գրականութեամբ և գիտական փիլիսոփայական գրուածներով. այսուեղ բացի ուրիշ պայմաններից առաջն գերը խաղում է նիւթի թարմութիւնը և ընտրութիւնը։ Ըստ երևոյթին ալդ «գիֆֆէրէնցիան» արգէն կատարուել է Պօլսահայ գրականութեան մէջ, որի հետ սակայն մենք շատ քի ծանօթ ենք։

Տ

Ես անկերծօրէն ցառում եմ այդ հանգամանքի վերալ և ոչ թէ այն պատճառով, որ Պօլսահայ գրականութեան մէջ երևան են գտլիս գեղարուեստական գոհարներ, որոնցից մենք զուրկ ենք մնում։ Ոչ. այդ կողմից ես ապահով եմ, որովհետեւ մեր գրականութեան պատմութիւնը ցոյց է տալիս, որ Պօլսահայ գրականութեան ընտիր երևոյթները ժամանակի ընթացքում մեր, արևելեան հայերիս, սեփականութիւնն էլ են դառնում։ Ես ցաւում եմ, որովհետեւ գրականութեան միջոցով մենք կկարողանալինք ի մօտոյ հետեւել մեր Պօլսահայ եղբայրների մտաւոր կեանքին, առօրեալ չարն ու բարին, իղձ ու լուսերին։ Կարդալով Պօլսահայ օրաթերթերը և ամսագրերը կամ շաբաթագրերը — ես տեսնում եմ, որ Պօլիսը իսկական հայկական կենդրոն է, որի հետ կապուած են բոլոր հայ գաւառները և զանազան

հայ գաղութները Բալկանեան թերակղզու վերալ, Ե-  
գիպտոսում, Կիպրոսում և ալլուր: Այստեղ կայ հայ  
կեանք իր բոլոր բազմազան ճիշդաւորութիւններով ու  
երեսլթներով և որ գլխաւորն է՝ ալդ կեանքով հետա-  
քրքրուողներ կան Ազգային վարչութիւն, Պատրիարքա-  
րան, դպրոց, հիւանդանոց, գրականութիւն, վերջապէս  
«ազգայինների» լէգէօն—դրանք լոկ խօսքեր չեն, ալլ  
և շատ պարզ հասկացողութիւններ, որոնք մարմնանում  
են այս կամ այն տեսանելի կերպով: Եւ չնայած բոլոր  
գժուարութիւնների և արգելքների—այս բոլորին մաս-  
նակից է ազգը, իբրև հաւաքական մի մարմին, ի դէմս  
Օրմանեանների, Օտեանների, Եռուսուֆեանների, Յա-  
կոբեանների, Պէրպէրեանների, Խթիւճեանների և ալլոց,  
որոնցից ամեն մէկը ներկայացուցիչ է որոշ ասպարիզի,  
որոշ երևոյթի, որոշ գործի:

Թրքաց գրաքննութիւնը շատ խիստ է. ալդ  
պատճառով էլ թրքահայ մամուլը խեղճ գրութեան մէջ  
է: Անուամենալինիւ նա կարողանում է արտափալեցնել  
թէ Պօլսահայ և թէ գաւառացի հայերի կեանքը: Մենք  
տեսնում ենք, որ սրբ. Պատրիարք Օրմանեանը ան-  
խոնց աշխատում է և մինչեւ իսկ կատարում է հասա-  
րակ քարոզչի պաշտօնը. մենք տեսնում ենք պէսպէս  
«ժողովներ» են գումարեաւ գրեթէ ամեն օր և կօլ-  
լէգիալ կերպով վճիռներ են կայացնում ամենալուրջ  
հարցերի մասին. տեսնում ենք, որ հարուստ և «ազ-  
նուական» դասը անտարբեր չէ զէպի ազգային գործե-  
րը և իր նիւթական ու բարոյական աջակցութիւնն է  
ցոյց տալիս թէ դպրոցին, թէ գրականութեանը, թէ ե-  
կեղեցուն, թէ գաւառական ընակչութեան: Եւ ըստ ե-  
րեսլթին Պօլսահայերի մէջ մեծ նիւթական ու բարոյա-  
կան ոլժ կայ, և չնայած բոլոր աննպաստ պայմաննե-  
րի, նրանք մեծ գեր են խաղում Պօլսի ընդհանուր կեան-  
քի մէջ իբրև վաճառականներ, պաշտօնեաներ, ազատ  
պրօֆէսիալի ներկայացուցիչներ, վերջապէս իբրև ար-  
հեստաւորներ ու բանուորներ: Հայերը այնպիսի մի  
գերք ունեն, որ նրանց անտես տռնել չի կարող ոչ  
Տաճկաց կառավարութիւնը և ոչ էլ Եւրոպաի ներկա-  
յացուցիչներ:

Այս բոլորը ի նկատի ունենալով ես ուղղակի խորհուրդներդ եմ տալիս ամեն մի հայի, որ կամի գաղափար կազմել հայ կեանքի մասին՝ հետևել Պօլսահայ մամուլին:

## Գ.

Այժմ մի երկու խօսք էլ Պօլսահայ զուտ գրական երեսովների առթիւ: Մեր ընթերցողները գուցէ չեն յոռացել համակրելի Պօլսահայ հեղինակ «Քասիմո-ֆին», ես շգիտեմ կեղծ անուն է դա, թէ իսկական, միայն կարող եմ ասել, որ նա ամենալին իրաւամբ կարող է Պարոնեանի յաջորդ համարուիլ: «Կեանքի տեսարանների» հեղինակը տաղանդաւոր վիպասան է և Արգիծադարն, մի քան, որ այնքան պակասում է մեր, Կովկասահայ գրականութեան: Քասիմը «Մանզումէի էքֆքեար» ի խմբագիրն է և նրա մշտական ֆէլիէտօնիստը: Թըրքահայ ալդ թերթում Քասիմը զետեղում է վէպեր և պատկերներ, վերցրած Պօլսի առօրեայ կեանքից: «Մասիսը իր մէկ խմբագրականով հարկ է համարում մատնանիշ անել Քասիմի ակնճռոտ հանգուց» ի վերալ, որը «արկածաւոր» վէպի բնաւորութիւն ունենալով հանդերձ լիովին իրական վէպ է «ուր հեղինակը մեր տոշե կըպարզէ շարքը տիպարներու որոնց կըհանդիպինք շուրջերնիս, կնկարագրէ միջավայր, որուն մէջ կապրինք, կարձանագրէ խօսակցութիւնները զորս կըլսենք<sup>1)</sup>»: Նա գրում է հասարակ ընթերցողի համար և ինչպէս երևում է արդէն իսկ ժողովրդականութիւն և սէր է վաւելում ընթերցողների ալդ դասի մէջ: Ես շեմ կարդացել Քասիմի ալդ կամ ուրիշ վէպերը, բայց «կեանքի տեսարանների» հիման վերայ իրաւունք ունիմ կալծելու, որ «Մասիսի» գրածը ճշմարտութիւն է: Քասիմը պէտք է որ ընթերցողներ ունենայ, որովհետեւ նա գրում է հասարակ և ոչ շինծու լեզուով և հաւատարիմ է մնում իրականութեան, ալսինքն անում է այն, ինչ որ անելու է ամեն մի վիպագրող և որից սակայն խուսափում են Պօլսահայ բազմաթիւ «նովէլ-

<sup>1)</sup> Մասիս 1904 թ. 20.

լիստները» (նորավեպ գրողները) և վիպասանները: Հետևանքը լինում է այն, որ մեզ նման «օտար մթնոլորդի» ընթերցողը ըստ մեծի մասին չի կարող մարսել Պօլսահայ նորավեպները և ձանձրովիշ է զգում ընթերցանութեան ժամանակ, և ընդհակառակ, մեծ հաճոյքով կարդում է Պարոնեանի, Քասիմի և նման գըրողների երկերը: Ալսպէս «Մասիս»ի մէջ զետեղուածքազմաթիւ վեպերից և բանաստեղծութիւններից ես պէտք է գերազանցութիւն տամ այն գրուածքին, որ X թեպէտ և պատկանում է պատժհական գրողի, բայց իր պարզութեամբ, իրական ճշմարտութեամբ և հումորով—աչքի է ընկնում: Խօսքս Ե. Շաւարշի «Պօլսական Ամուսնութիւններ» պատմուածքի մասին է, որը չգիտեմ ինչու վէպ է անուանուած: Նա վէպ լինելուց շատ հեռու է և իսկապէս ասած մի պատկեր է կամ պատմուածք: Հեղինակը ուղղակի լուսանկարում է Սարգիս Աղայի նշանառուքը, զուգնթացաբար տալով մի քանի Պօլսական տիպեր, գլխաւորապէս վաճառական շրջանից: Հեղինակը ուշիմ դիտող է և վարպետ լուսանկարող, այնպէս որ չի մոռացուել մարդու, տեղի, հանգամանքի և ոչ մի գիծ, որ բնորոշում է ամբողջ պատմուածքը: Զերաւագ կենդանի կանգնած են և խեղճ Սարգիս Աղան, կիսակիրծ մանուֆակտուրիստը, և նրա գործակատարները, և աղքատացած Սիփոնիկ Աղան իւր ընտանիքով և օրիորդ Մառին, որին անբաղտութիւն է ունեցել հաւանել Սարգիս Աղան, վերջապէս Մըթմըթեանի տունը-տեղը հաճի Վարդերեսով հանդերձ: Հեղինակը պատմում է միշտ ժամանակից երեսին, չմոռանալով այնպիսի մանրամասնութիւններ, որ ում ասես ծիծաղդ կշարժեն և ես կուշտ կուշտ ծիծաղում էի պատկերի վերջին երեսները թերթելով: Նոյն «Մասիս»ի աշխատակից Գամէրի «ուրուագիծներից» իմացայ, որ Ե. Շաւարշը կեղծանունն է Մանչեստրյի վաճառական Արագեանիք. որը բնիկ Պօլսեցի է: Ուրախալին այն է, որ հեղինակը ընդամենը քսանըհինգ տարեկան է և մեծ սիրահար է գրականութեան: Ով գիտէ, գուցէ մօտ ժամանակում Շաւարշի աւելի ևս լու երկերուն

ալ կհանդիպինք. ափսոս կլինէր, եթէ արդպիսի գրիչը  
անգործութեան դատապարտուած լինի:

Դ.

Մի բան, որին ես գեռ չեմ կարողացել ընտելանալ  
—արդի Պօլսական քնարն է: Թէ նրա լեզուն, թէ ո-  
գեորութիւնը, թէ նիւթը —ինձ շատ խորթ է թւում.  
ըստ մեծի մասին ես ստիպուած եմ մի քանի անգամ  
կարդալ միևնույն ոտանաւորը, որպէսզի հասկանամ նրա  
գաղափարը և ըմբռնեմ նրա գեղեցկութիւնը. եւ երբ  
հասնում եմ նպատակիս—ստիպուած եմ լինում խոս-  
տովանելու, որ մեղաւորը ես եմ և ոչ թէ հեղինակը.  
նա գրում է ալնպէս, ինչպէս որ պէտք է գըէ ամէն  
մի պօլսեցի բանաստեղծ և նրան ամէն մի ընթերցող  
անշուշտ կհասկանար: Իսկ եթէ մենք չենք հասկանում  
նրանց—մեղքը մերն է: Ալնու ամենալինեւ շնորհալի  
ոտանաւոլ ների, իսկական բանաստեղծական աւելնի—  
ես շատ քիչ եմ պատահել: Առաջուց այդ տեսակ գա-  
ղափար կազմած լինելով Պօլսահալ բանաստեղծների  
մասին, ես իհարկէ շատ էլ չհաւատացի Տ. Զրաքեանի  
գովասանքներին<sup>1)</sup>, որ նա թափում է Ռ. Յ. Պէր-  
պերեանի «Խոհք և յուշք» երին: Ուշեւոս Պէրպերեա-  
նին ես գիտեմ իբրև մանկավարժ, հռետոր, քննա-  
դատ. և գիտեմ որ այդ երեք ճիւղերումն էլ նա  
առաջնակարգ տեղ է բռնում: Առաջ էլ, այժմ էլ ես  
հիանում եմ կարողալով նրա ճառերը. երևակայում եմ,  
ինչպէս պիտի հիանալի եթէ լսէի: Ճառերից և յօդուած-  
ներից երևում է, որ նա բազմակողմանի զարդացած և  
խելօք մարդ է: Զէի կարծում, որ նա և բանաստեղծ  
է: Բայց երբ ստացայ նրա «Խոհք և Յուշք» ը և ուշի  
ուշով երկու-երեք անգամ կարգացի—տեսալ որ Ռ.  
Պէրպերեանը իրաւունք ունի իր տաղանդների շարքում  
—բանաստեղծի տաղանդն էլ աւելացնել: Այդ բաւա-  
կան չէ—ես տեսալ, որ իբրև մարդ էլ ու իբրև ամու-  
սին հազուագիւտ տիպերից մէկն է: Արտաքին կողմից

<sup>1)</sup> Արևելեան Մամուլ, 1904 թ. 34.

բանաստեղծութիւնների ժողովածուն մի քիչ տարօրինակ է թուում կարծես՝ սկզբում իր և կնոջ պատկերը, յետոյ զաւակների գրուպպան. գրոյկի մէջ զետեղուած է 46 ոտանաւոր—բոլորն էլ 12-ական տող, ամեն մի տող 11 ական վանկից բաղկացած։ Ով գիտէ— գուցէ դրանով հեղինակը ուզեցել է ցոյց տալ, որ իր վիշտն ու սուգը միշտ միօրինակ են... Սակայն ինչ է վշտի պատճառը։

Այստեղ է ահա սարսափելի դրաման։ Նա կորցը է իր սիրած մատաղտհաս կնոջը, իր երեխաների մալը իր ընկերը։ Մեռել է նա

... «Որ քու կեանքիդ ամեն վալրկենին  
Փեզ հետ շնչող լնկեր մըն էր անմեկին,  
Արուն սիրտը կուրծքիդ վրալ կը թրթուար  
Ու աչքերուդ մէջ էր նարուածքն անդադար,  
Որ հետ էր իբրև մարմին և ստուեր,  
Միաձոյլ կեանք, հոգի, իղձ, կամք և խոհեր...»

Հեղինակի համար դա այնպիսի մի կորուստ է, որ նա չի կարողանում ուշքի գալ սարսափելի հարուածից։ Նա նարում է չորս կողմը—և միայն ամայութիւն է տեսնում՝ տանը, սենեակում, միայն որբացած երեխաներին է հանդիպում։ Եւ ահա տեսէք թէ ինչպիսի պատկեր է տալիս փիլիսոփայ բանաստեղծը այն բնակարանին ուուրկէ մեկնած է զայն լեցնող քաղցր հոգին։

Ո՞չ Աստուած իմ, ամայութիւնը լարկին  
Ուրկէ մեկնած է զայն լեցնող քաղցր հոգին։  
Տաճարն է ալն, ոյր կործանած է խորան,  
Ու ալ դադրած պաշտամանց կարգ սրբազան.  
Վառարանն է, ուր չի վառիլ ալլ ևս հուր,  
Մարմինն է զօր կեանքը թողեր է թափուր։  
Ու հոն համայն լիշտատակ է գիւրաբոյր,  
Ամէն կէտէ արցունքի շիթ մ'ինալու.  
Հոն ամէն բան լի էր իրմով, ու հիմտի  
Անչունչ իրք ալ թրւին հարցնել «ո՞ւր է նա»։  
Երջանակ մ'է տունն ոյր նկարն է ինկեր։  
Սև չորս դին սրտից սուգը գըծագրեր...»

Խնձ վրայ շատ խորը տպաւորութիւն գործոց այս  
բանաստեղծութիւնը և լիշեցրեց Պէտրարկայի ու Նէկ-  
սպիրի սօնէտները, Ռօդէնքախի և ռութիւնը։ տեսէք  
թէ որ աստիճանի խոր ըմբռնում իր և շրջապատի հո-  
գեբանութեան և տրամադրութեան։ որպիսի համեմա-  
տութիւններ՝

«Շրջանակ մ'է տունն ոյր նկարն է ինկեր»։

Ել Բնչ գին ունի այդ շրջանակը առանց թանկա-  
գին պատկերի... սիրած ընկերը մեռած է։ Ել ինչո՞ւ  
է կեանքը, նրա վայելքները։ նա նրանցով չի կարող  
օգտուել։ նրանք միայն լիշողութիւններ պատկերացնե-  
լու որժ ունեն այսուհետեւ,—ուրիշ արժէք հեղինակի  
համար չունեն։ Եւ նա լիշում է անցեալ օրերը, երջա-  
նիկ ժամերը—երբ նրանք միասին էին։ ոհ որքան եր-  
ջանկութիւն և որպիսի անգութ հարուած զրկուել ընդ  
միշտ նրանից։ Սուգ և վիշտ, կոկիծ և արցունք—ահա  
նրա բաժինը այսուհետեւ։ Եւ Բնչ զարմանալի ու ան-  
բացատրելի բան է այդ մահ ասածդ. ով կարող է հաս-  
կանալ թէ Բնչ է նա և ո՞ւր է սահմանը կեանքի և  
մահուան։ Ալդ հարցը խորասուցում է նրան մտած-  
մունքների մէջ, որոնց հետ կապում են լիշողութիւն-  
ները և արտայատուում են հետեւեալ գեղեցիկ էլե-  
գիալով»

«Կեանքէն ի մահ Բնչ անջրպետ, Բնչ միջոց.  
Մահէն քանի տարբեր կեանքին լետին բոց,  
Մինչ կապրի դեռ, կընա՞լ հիւանդը նալիլ,  
Խօսիլ քեզի, ու արտասուիլ, ու ժպտիլ,  
Հոգին հոգւոլդ հաղորդակցիլ, ու սիրուդ  
Արձագանք տալ իր սրտեկին սէրն ու ութ.  
Կա՞լ, անոր հետ չես դու մենակ, ու որքան  
Ալ ոգեսպառ՝ բայց կըշնչէ, հոն է ան...  
Ցանկարծ—անհաս, ցնորեցուցիչ անցք—ըզքեղ  
Իրեն քովը մենակ մնացած կը գտնես。  
Ոչ սև ժպիտ, ոչ սև արցունք, խօսք, նայուածք,  
Մարած երկինք ուրկէ արևն է մեկնած...»

Ահա այսպէս կնոջ մահը Ռէթէոս Պերպէրեանին  
բանաստեղծ է արել և թելադրել է այն սգի և տրա-

մութեան տողերը, որոնք գուցէ ամենալաւերը չեն այս ժողովածուի մէջ, բայց որոնք բնորոշում են մտածող —բանաստեղծի տրամադրութիւնը և քնարը։ Մենք գիտէինք, որ Ռ. Պէրպէրեանը խոր մտածել գիտէ. ալժմ իմացանք, որ նա և խոր զգալ գիտէ։ Իսկ անկեզծօրէն արտայալտել իր զգացմունքը—արդէն բանաստեղծութիւն է։ Եւ այդ տեսակ բանաստեղծութիւն մեր գրականութեան մէջ դեռ չգիտեմ. կան գրանից լաւերը և վատերը, գեղեցիկները և անշնորհքները, աւելի զօրեղները և թուլերը. բայց այդ բնաւորութեամբ մեր գրականութեան մէջ ես դեռ չեմ պատահել։ Կայ ընդհանուր գրականութեան մէջ մէկը, որին մօտենում է իր «Խոհք ու Յուշք» ով Ռէթէոս Պէրպէրեանը— դա Պէտրարկան էր, որ դարեր աւաշ, Խտալական վերածնութեան լուսադէմին ողբացել էր հրաշալի սօնեթներով իր աննման Լառուալի սէրը և մահը։ Հենց այս ըոպէիս միտս է գալիս նրա XI-րդ սօնէտը (In morte di Maddonna d'angra), որի վերջին տողերը թող միսիթարութիւն լինեն մեր բայ բանաստեղծին, որ լանձին տիկին Զարուհու—կորցրել է իր Լառուալին ..

## Ե.

Կուզէի ես անմահն Բէթհովէնի պէս՝ ասել «ընկերներ, թողնենք այս տխուր հնչիւնները. երգենք ուրիշ, աւելի պայծառ և աւելի ուրախ երգեր»... բայց ո՞ւր է ծիծաղ, ուր է ժպիտ. ես չեմ տեսնում այն։ Եւ եթէ պատահում էլ է տեսնել, ես զգում եմ այն խոր կակիւը, «անտեսանելի արցունքները» (ինչպէս Գօգոլն ասաց) որոնք ծածկուած են արտաքին խինդ ու ծիծաղի տակ։

Մի քանի մանր գըքոյկներ կարդացի և չտեսալ, որ հեղինակներից մէկն ու մէկը ուրախ զուարթ տրամադրուած լինէր։ Իրականութեանը հաւատարիմ —նրանք կամ ողբում են (ողբ չէ միթէ Ա. Իոահակեանի քնարը, Ահարոնեանի մուսան. «ալժմէութեան» նարեկացիներ են նրանք), կամ զայրոյթով հեգնում են, կամ համարձակօրէն ապտակում են։ Նշանաւորն այն է, որ

թէ սկսնակները թէ անուն վաստակած գրողները, թէ տաղանդաւոր գրողները, և թէ գրիչ մըոտաղները—բոլորը մի եղանակով են երգում, մի տօն են պահում, որ է

«Մի սրտաշարժ, մի շատ տխուր, տրտում երգ»:

Ես կարծեցի, որ պ. Յ. Թումանեանցի (Սուրբաթեանի) երկու գրքուկը կտայ կեսնքի ուրախ պատկերներ. բայց—նրանք ծիծաղաշարժ են միայն ըստ երեւոյթին. Ղրիմու. Նախիցնանի բարբառով գրուած երկու պատմութիւնների՝ Մելքոն Աղային Սթօռեան և Մելքոն Աղային վերջարանութիւնը— դառն ծաղր է հազար ու մի պախարակելի միջոցներով հարստացող մեր վաճառականների վերալ, որոնք գող ու աւազակ չեն անուանւում, որովհետեւ չեն բռնուած՝ ըստ ոսի ասածի՝ ու մե պահանջանութեան երկրորդ մասը «Անդի Աշխարջը» նսանողութիւն է Գ. Սունդուկեանցի յալտնի վօդքիլի: Դժբաղտաբար մեր Ղրիմցու հեղինակին պակասում է երկու մեծ հեղինակների ծաղրելու տաղանգը, որով իհարկէ գրուածքը կորցնում է իր զլիաւոր արժէքը՝ լրջութիւնը: Բացի դրանից հեղինակին չի յաջողուել լիուլի օգտուել բարբառի հարստութիւնից—ինչպէս այդ արել են Պատկանեանը, Սունդուկեանը, Տմբլաչի Խաչանը և ուրիշները, որոնք բարբառով են գըրել: Մինչդեռ եթէ լաւ չիմանալ զըրել բարբառով, այն ժամանակը բարբառի էլ, գրուածքի էլ համը հոտը կորցւում է. ուրիմն ինչո՞ւ զըրել բարբառով: Այնուամենանիւ չեմ կարող ուրանալ, որ վերոյիշեալ «Անդի աշխարքակի մէջ կան բաւական սրամիտ կտորներ»: Այսպէս օրինակ կեղծաւոր Թառաս Խանիչը հետևեալ կերպով է խոտափանում իր յանցանքները, որոնք նրան դժոխք են բերել՝ «Պամն ալ, աղօթքն ալ շթուքի համար կպահէի, որ արած ցածութիւններս շերեւան տէյին. խաբէութիւն, գողութիւն, սուտ էրթում—շտէ իմ կլավնիյ փոէտմէթներս...» Այդ շատ լաւ է. ինչպէս ամեն մի դպրոցում, այնպէս և կեանքի դպրոցում

—լինում են գլխաւոր և ոչ գլխաւոր առարկաներ. Մելքոն աղաների, Թառաս Խվանիշների գլխաւոր առարկաները իհարկէ՝ գողութիւն, խաբէութիւն, որկրամոլութիւն, անառակութիւն և այլ ալսպիսի «գիտութիւններն» են. իսկ մարդավարութիւնը, եղբարսիրութիւնը, ազգասիրութիւնը և այլ «առարկաները» նրանց համար նոյն նշանակութիւն ունին, ինչ որ մի որևէ է գիմնազիոնում՝ երգեցողութեան, գծագրութեան կամ մարմնամարզութեան դասերը... Ալ—դրանք են, որ հասկցել են «օյինի միտքը»—ալսինքն կեանքի գաղտնիքը: Նրանց ինչ հոգ, որ չորս դին «շիւան ու լաց է», որ կարիքը երկաթէ բազուկներով խեղտում է խեղճ որբերին, որ մեզ մութն է պատել տգիտութեան և մարդիկ իրանց կեանքը չեն խնայում մեզ ալդ խաւարից ի լուս աշխարհ հանելու, նրան ինչ փոլթ. որ գաղափարը ոտնակոխ է եղել, իսկ արդարութիւնը Գողգոթա է հանուել... Իր ստամոքսով կուրացած մեր Մելքոն աղաները երբէք չեն ունեցել Աստուած և գժոխքով համոզել կամ վախեցնելը նրան անկարելի է: Պատկանեանը լաւ էր հասկացել ալդ տեսակ մարդկանց անստուածութիւնը և իր հերոսներից մէկի բերանը դրել էր հետևեալ բնորոշ նախադասութիւնը՝ «Անտի աշխարք պիտ երթաս եղել. . ան ալ նալինք կամի...» Հապա. նա նախ նշանակութիւն չի տալիս, որ հեռաւոր ապագայում կարող է գժոխքն ընկնել. բայց եթէ ի նկատի էլ առնելու որ լինինք ալդ ո՛չ—հաճելի ճանապարհորդութիւնը՝ դա դեռ մեծ հարց է՝ գոյութիւն ունի արդեօք ալդպիսի մի հաստատութիւն, ինչպիսին է գժոխքը: Ուրեմն ասէք, ի սէր Աստուծոյ— ինչը կարող է ուշքի բերել ալդ մեր մեծամասնութիւնը կազմող քաղաքացիներին. ինչո՞վ կարելի է ազդել ալդ կէսմարդկունց վերալ, մանաւանդ ալնպիսի ժամանակ, երբ մէկի տեղ—հազար տուող ձեռք է հարկաւոր, երբ հոսուող արցունքը առու է դարձել..

Ես տամ հարց և ով կտալ ինձ պատասխան. ով է այն բժիշկը, որ գալու է դարմանելու մեր ցաւերը, անդամահատելու մեր վարտկիչ վէրքերը:

Ելի մեր լուսը քո վերալ է, ով «երկդիմի» ժամա-

նակ, որ նայես ետև և տեսնես ամբողջ մեր պատմութիւնը, ու միւնոյն ժամանակ աչքերդ լառած դէպի առաջ տեսնում ես այնտեղ լոյտի-լոյսի շողեր, հեռաւոր գարնան վարդ ու ծաղիկներ:

## Զ.

Վառ լուսեր երազելու ամենից աւելի ընդունակ են բանաստեղծները. բայց և դրանք վերջին ժամանակ շատ լուսետես են տրամադրուած. իսկ եթէ լաւատես են—շատ քիչ են խօսում ազգի ցաւերի մասին, գրեթէ չեն շօշափում քաղաքացիական մօտիւներ: Ահա իմ առաջ բանաստեղծութիւնների երկու ժողովածու կայ՝ փոքրիկ բարակ գրքոյիներ: Մէկը—Արտաշէս Յարութիւնեանի բանաստեղծութիւնները—Հրատարակուած է 1902 թուականին Պօլսում, միւսը՝ Սիմ. Բարիեանի—1904 թուականին, Ս. Պետերբուրգում, Երկու գրքոյիկի մէջ էլ քաղաքացիական կոչուող մօտիւր—բացակայում է. դա կարող է լինել զուգադիպութիւն. այնու հանգերձ նա հասարակութեան որոշ մասի տրամադրութիւն ցուցագրող կարող է լինել:

Ապա Բնչ են նրանց ոտանաւորների մօտիւները: Բնութիւնը և իրանց «եսը»: Ս. Բարիեանը մասնաւորապէս զբաղուած է բնութիւնով, իսկ Ա. Յարութիւնեանի համար գերակշռողը իր «եսն» է, իսկ բնութիւնը աւելի ֆօն է: Առաջինը Ղրիմցի է և զարմանալի չէ որ նա հիացած է բնութեան հրաշալիքներով և այդ հիացումը նրան բանաստեղծ է դարձնում. սակայն միայն մի բոպէի համար, յետոյ—նրա ոգեսրութիւնը հանգում է և արդէն բանաստեղծը պրոցալիք է դաւնում: Դա նշան է, որ. Ս. Բարիեանը ծնուած բանաստեղծ չէ և միւնոյն արտաքին հանգամանքները նրան բանաստեղծ են դարձնում. ուստի մի քանի տասնեակ ոտանաւորներից՝ հազիւ մի երկու կտոր կարելի է գըտնել, որոնք իրանց արտաքին ձևով և ներքին բովանդակութեամբ արժանի լինէին տպագրուելու: Նրան լաջողուել են Ղրիմի բնութեան «պատկերները» և նրա լաջող ոտանաւորները իսկապէս նկարուած պատկերներ

են, ինչպէս «Արմեանսկը» «Պերիկօպի դաշտերում», «Մալիսեան գիշեր» «Խըմի լուշատերից»։ Բայց հէնց որ հեղինակը թողնում է վրձինը և սկսում է դատողութիւններ անել կամ երազել—նա իսկոյն ցոյց է տալիս թէ իւր թուլութիւնը իբրև բանաստեղծի և թէ իբրև վերսիֆիկատուրի (ոտանաւորով գըող)։ Մի երկու գեղեցիկ պատկերներ Ղրիմու գեղեցիկ բնութեան—ահա այն բոլորը ինչ որ կարողացել է տալ Սիմ։ Բարիեանը իր գրքուկով, մնացեալը—հանգիստ կարող էր մնալ հեղինակի գրասենեակի արկղներում նրա աշակերտական շարադրութիւնների կողքին։ Աւելի լուրջ և հետաքրքրական է Պօլսեցի հեղինակ Ա. Յարութիւնեանը նրա մէջ կայ զգացմունք և ինքնուրունութիւն, համարձակութիւն և տէմպէրամէնտ։ Այնուամենա նիւնա էլ հեռու է իսկական բանաստեղծ լինելուց, որովհետև նրա պօեզիան շատ սահմանափակ է և «կարճատես»։ Հեղինակը, նրա «Եսը», նրա սէրը, սիրու առարկան, բնութիւնը, որը ալսպէս կամ այնպէս է տրամադրում հեղինակին—ահա այդ պօլսական պօեզիայի մօտիւները։ Դուցէ այստեղ գրաքննութիւնն է մեղաւոր, որը Տաճկաստանում շատ խիստ է և թոյլ չի տալիս հեղինակին շօշափել ուրիշ խնդիրներ բացի «Վարդ» ու սոսխակից։ Ոչ բանաստեղծի տրամադրութիւնը արդէն ցոյց է տալիս, որ հեռու է այդ տեսակ մօտիւներից։ Նա այնքան և այնչափ ապրում է անձնական կեանքով, որ էլ տեղ չի մնում հասարականին։ Ոչինչ. ես միակողմանի չեմ. ես այդպիսի պօեզիա էլ ընդունում եմ ու ոչ միայն արդարացնում եմ, այլ և անհրաժեշտ եմ գտնում, որ լինի։ Դրականութեան մէջ արձագանք պիտի գտնեն կեանքի ամեն տեսակ երառութներ, թողութեմն անձնական պօէզիան էլ գոյութիւն ունենար։ Բայց հարցն այն է, թէ նա ինչ է մեզ տալիս, ինչ է սովորեցնում։ Ա. Ցովհաննիսեանը սիրահար է գեղեցիկութեան, բայց աւաղ որ նա ըմբռնում է գեղեցկութեան տւելի նիւթապաշտական կողմը, քան թէ վսեմ ու վերացականը. և մինչև իսկ իր երգերի մէջ նա կարծես մոռանալով համեստութեան սահմանները ու ոգևորուելով արտաքինի հրապուրներով նկարագրում է

Մազերն ըսփիւռ ոսկեզօծ՝  
Կը սանդրէ անի,  
Ու կը սարսռան լանջքը հոծ  
Ու պորտն հոլանի։

Աստուած չանէ, որ մի բանաստեղծ մինչև «պորտը» հասնի. այդտեղ վերջանում է բանաստեղծութիւնը և սկսում է այն հիւանդոտ պօեզիան, որին մենք հանգիպում ենք Բօդիէսի կամ Վէրլէսի մի քանի անհամեստ ոտանաւորների մէջ և որոնց շնորհիւ այդ բանաստեղծներն հիւանդ ու խելագար են հոչակուել:

Ա. Յարութիւնեանը լաճախակի խօսում է իր «աղուրոր»ի մասին (գիտէինք «սիրելիս», «եարս», բայց գեռ չէինք հանդիպել «աղուրոր»ին. մտխլաս, ինչևսից է էութիւնը նոյնն է). բայց և միշտ Հէյնէի նման զգուշացնում է, որ նա երկար սիրել չի կարող, ու մէկ «աղուրից» դէպի միւսը սնցնելը նրա համար հասարակ բան է: Նա սիրում է իր «աղուրորին» և պատրաստ է նրա անունը լաւերժացնել իր երգերի մէջ. բայց ես չտեսալ, որ նա պաշտէր իւր «աղուրոր»ին և վերաբերուէր դէպի նա այն իդէալական սիրով, առանց որի ուրն էլ սէր չէ, սիրոյ հրապորն էլ կորցնում է իր շքեղութիւնը և վսեմութիւնը:

Սակալն չեմ կարող ասել, որ Ա. Յարութիւնեանը զիկուած ինէլ իդէալապէս զգացուելու ու զգա ու ընդունակութիւնից. Երկու ոտանաւոր՝ ամենագեղեցիկները իմ կարծիքով - ցոյց են տալիս, որ նա կարող է մտքերով ու լոյզերով սլանալ չատ հետուն այս մեղսալի աշխարհից՝ դէպի երկինք, դէպի Աստուած: Այդ լինում է երբ նա բնութեան գրկումն է (զարնանային երազանք) կամ Տաճարում (*Մուսը*): Երկու դէպիումն էլ կարողանում է իր քնարի այնպիսի լարերը հնչեցնել, որ կարգացողը չի կարող շխոստովանել, որ նրա մէջ կայ բանաստեղծական քանքար, թէպէտ և ոչ մեծ: Եթէ նա իր ոտանաւորները հրատարակելուց առաջ ջոկէր ու մաղէր, այն ժամանտկ մենք կունենալինք թուով քիչ, բայց բովանդակութեամբ հետաքրքրական ոտանաւորներ, որոնց մէջ աւելի կցոլար հեղինակի քանքարը,

քան թէ ալժմ նրա բազմաթիւ, բայց շատ անդամ ջրալի  
ոտանաւորների մէջ:

Է.

Օտար գրականութեան մէջ այնքան շատ կան նորութիւններ և միւսնոյն ժամանակ և ոչ մի արտաքոյ կարգի երեսոյթ, որ ես դժուարանում եմ այստեղ խօսել նրանց մասին: Օգտում եմ լրագրական լուրից երկու խօսք նուիրելու մի գրողի մասին, որի հետ գուցէ ամեններն ծանօթ չէ հայ հասարակութիւնը, բայց որի գործունէութիւնը որոշ ազդեցութիւն է ունեցել ֆրանսիական գրականութեան վերայ, մասնաւորապէս քննադատութեան: Դա Սէնտ Բերն է, որի ծննդեան հարիւրամեակն են տօնելու ֆրանսիական գրական շրջանները գեկտեմբեր ամսում: Քննադատութեան պատմութեան մէջ անջնջելի հետք է թողել ալդ տաղանդաւոր ֆրանսիացին, որ XIX-րդ դարու առաջի կիսում տարիների ընթացքում քննադատութեան էր ենթարկում գրական ուղղութիւնները և գործութիւնները, գրականներին և նրանց գրուածքները, գրականութեան անցեալը և ներկան: Հետաքրքրական է այս քննադատի գործունէութիւնը, որ ոչ սրոշ «սրբութիւն» է ունեցել, լանուն որի ամեն մէկը մեզնից վիճում, գովում ու քարոզում է. ոչ ուղղութիւն, որի ախոյեանը նա լինէր. ոչ էլ քննադատութեան մի մէթօդ, որի հիման վերայ նա պարտական հտմարէր քննադատել գւական արտադրութիւնները: Զնալած ալս և շատ ուրիշ պակասութիւններին. այնուամենայնիւ նա մեծ դեր է խաղացել իբրև քննադատ:

Դրա պատճառը պէտք է որոնել այն պարզ հանգամանքում, որ Սէնտ Բերն քննադատական տաղանդը քննածին էր: Նա այն քննադատաներիցն էր, որոնց մասին խօսում է և Լև Տօլստոյը—իբրև իսկական քննադատների մասին: Լ. Տօլստոյի կարծիքով քննադատութեան ճշգրիտ որոշումը (օպրեդքլուսիոն) տուել է Սէնտ Եղիշե Առնօդը, որի կարծիքով «քննադատութիւնը պէտք է որոնէ և գտնէ այն բարորի մէջ, ինչ որ երբ և իցէ և ուր և իցէ գրուած է եղել, ամենակարևորը

և ամենալաւը և այդ ամենակարևորի և ամենալաւի վերալ պէտք է ընթերցողների ուշքը դարձնէ»:

Հէնց արդպէս էլ վարւում էր Սէնտ Բևը: «Քննադատը, ասում էր նա, այն մարդն է, որ իմանում է կարդալ և որ կարդալ է սովորեցնում ուրիշներին»: Ալսինքն—այն մարդը, որը հասկանում է այն, ինչ որ կարդում է, ըմբռնում է կարդացածը, հասկանում է հեղինակին, թափանցում է նրա մտքի և հոգու խորքերը, և օգնում է ընթերցողին նոյնն անելու գործում: Սակայն միայն հասկանալով չէր բաւականանում Սէնտ Բևը:—Ով որ ունի գեղեցիկ ճաշակ, նա չի կարող անտարբեր անցնել լաւի կամ վատի մօտով, իսկ Սէնտ Բևը արտաքոյ կարգի զարգացած ճաշակի տէր մարդ էր և նա չէր կարող չգերադասել լաւը, կամ ըլպախարակել վատի: Վերջին դէպքում նա այդ «վատը» այնպիսի փոփոխութիւնների էր ենթարկում, այնպիսի յաւելումներ կամ յապաղումներ էր անում, որ գրուածքը վերածնուում էր, կարծես, և արդէն քննադատի ծրագրած գեղեցիկ ու լաւի գաղափարին էր մօտենում<sup>1)</sup>: Իր այդ ընդունակութեան կամ սովորութեան մասին է, որ նա տառամ է «քննադատութիւնը միևնուն ժամանակ և անդադար ստեղծագործութիւնն է»:

Բնածին խելքը և քննադատական ձիրքը, գեղեցիկ զարգացած ճաշակը և ընթերցանութիւնը— շատ հեշտացնում էին գրական երկը հասկանալու գործը: Բայց հարցասէր Սէնտ Բևը գրանով չէր բաւականանում և ամեն մի գրուածք ուսումնասիրում էր այդ գրուածքի հեղինակին ուսումնասիրելով: Նա ժրաջան մերզուի նման հաւաքում է հեղինակի մասին բոլոր տեղեկութիւնները, ստեղծում է իր երեակայութեան մէջ այդ հեղինակի մտաւոր պատկերը և ապա վարպետ պատկերագրողի նման տալիս էր հեղինակի դիմագիծը և առանց տատանուելու արդէն հեղինակի գրուածքների մասին: Սէնտ Բևին—ասում է Բրանդէսը—հետաքրքրում է գրքի հեղինակը, նրա նպատակն է գտնել գրքի

<sup>1)</sup> Տես՝ Է. Փագէի «XIX-րդ դարու բաղաբական «մտածողներ և բարոյագէտներ» ուսումնասիրութիւնը».

ետևը թագնուած հեղինակին (trouver l'homme derrière le livre): Շնորհիւ այս խուզարկութիւններին և ուսումնասիրութիւններին Սէնտ Բել տուել է մի շարք գեղեցիկ կիսաքննադատական, կիսակենսագրական լոգուածներ: Հեղինակների կեանքը և բնաւորութիւնը ուսումնասիրելու ալդ ձեւ լետոյ կատարելագործեց միւս Փրանսիացի քննադատը—Հոչակաւոր Տէնը: Ալսպիսով Սէնտ Բել առանձին նշանակութիւն տալով հեղինակի հոգեբանութեանը և ալդ հոգեբանութեան որոշ մօմէնտի ծնունդ համարելով հեղինակի ամեն մի գրուածքը —մտցնում է քննադատութեան մէջ այն հոգեբանական մէտոդը, որով ղեկավարուում են քննադատների մեծամասնութիւնը մինչեւ օրս էլ: Նրա գլխաւոր երկերն են՝ «Երկուշաբթուայ բանասիրականներ» և «Պոռ. Ռոլեալ»:

## Բ.

Ուսւաց գրականութիւնը և ընթերցող հասարակութիւնը գեռ գտնուում է երկու ծանր հարուածների ազդեցութեան ներքու: Մէկը միւսի ետևից մեռան՝ Նիկոյալ Կոնստանտինովիչ Միխայլովսկին և Անտոն Չեխովը: Ա. Երջնիս գրուածքների հետ մեր ընթերցողները ծանօթ են, իսկ կենսագրական տեղեկութիւններ հաղորդուած են «Լումալի» № 4-ում, ինչպէս և միւս հայպարբերական հրատարակութիւնների մէջ: Առաջներն էլ երևացել են մեզ մօտ յօդուածներ վաղամեռիկ տաղանդաւոր ուսւացիսկանի մասին<sup>1)</sup>: Միխայլովսկու մասին մեր մամուլը շատ քիչ է խօսել, մինչդեռ, ըստ իս, Միխայլովսկին իր գրուածքներով մեծ ազդեցութիւն է ունեցել մեր հայ ինտէլիգէնտ սերունդների վերալ, այսինքն 70-ական, 80-ական, գուցէ և 90-ական թուականներում ուսւաց համալսարաններում սռվորող հայ երիտասարդների աշխարհայեցողութեան վերալ: Միխայլովսկին 40—50 տարիների ընթացքում աշխատել է գրական ասպարիզի վերալ և գրեթէ սկզբէց ի վեր ա-

<sup>1)</sup> Զէթովից շատ բան թարգմանել է և զետեղել «Նորդարին» բանասիրականում Հայր Մուշէ Դանագողեանը:

զատամիտ երիտասարդութեան և կուսակցութեան պարագլուխ է ճանաչուել, Տասը ստուար հատոր գրաւածք — ահա նրա մահարձանը, որ նա ինքն իրան է կանգնեցրել, հատորներ, որոնց մէջ հեղինակը արձագանք է տուել տասնեակ տարիների ընթացքում ռուս գրական և հասարակական տապարիզում երևացող գրեթէ բոլոր հարցերին: Միաժամանակ նա և քննադատ է, և սօցիօլօգ և հրապարակախօս: Իրեւ առաջնակարգ գիտնական նա քննութեան բովից է անցկացնում Սպէնսէրի, Դարվինի, Կարլ Մարկսի գրուածքները. տալիս է բազմակողմանի ուսումնասիրութիւններ անհատի և ամբոխի հոգեբանութեան. գրում է գեղեցիկ քննադատութիւններ Գարշինի, Ուսպէնսկու, Տօլստոյի և ալլոց գրուածքների. անդադար խրախուսում է նոր տաղանդներին և ծաղրի առարկալ է շինուամ ապիկարներին. Կըուում է պահպանողական կուսակցութեան հետ և պաշտպանում իւր գաղափարները. թէ թշնամիների և թէ հակառակորդների յարձակումներից...

Եւ յանուն բնչ բանի այս բոլորը:

Յանուն մարդու, մարդկային իրաւունքների: Ամէն բանում նա նախ և առաջ վնարում էր մարդուն, մարդու երջանկութիւնը, մարդկային բարձր շահերը և ամեն ինչ անում էր ըստ այդ չափի: Նրան վիճակուեց գործելու այն շըջանից անմիջապէս յետոյ, որը բարեփոխեց ամբողջ ուստիան և Միիխալլովկին ամբողջ կեանքը նույիրեց ի պաշտպանութիւն և ի զարգացումն այդ շըջանի գաղափարներին: Լոյս և ճշմարտութիւն մտցրին 60. տկան թուականները և Միիխալլովսկին դարձաւ նրանց ամենատաղանդաւոր պաշտպանը և պրոպագանդիստը: Որուս գեղջուկ տարը, որը նոր-նոր ազատուեց ճորտութիւնից — գարձաւ Միխալլովսկու ամենալուրջ ուշադրութեան առարկան. և եթէ մի քանի ռուս հեղինակներ ստեղծեցին գրականութեան մէջ ժողովրդասիրական ուղղութիւն, — այդ ուղղութիւնը գիտական հիմքերի վերա գնողը եղաւ Միխալլովսկին: Նա ունէր զարմանալի ընդունակութիւն խօսել ամենահրատապ ինդիրների մասին և քննադատութեան են թարկել այնպիսի գրուածներ, որոնք այս կամ այն կող-

մով կապուած են իրականութեան հետ։ «Գրականութիւն և կեանք» էին կոչում նրա բազմաթիւ լրագրական և ամսագրական լոդուածները. և ճիշտ որ նրանց մէջ կեանքը գրկախառնուած էր գրականութեան հետ և առանց առաջնիս—վերջինս նրա համար արժէք չունէր։ Այդ ատճառով էլ նրա լոդուածները միշտ թարմ և հետաքրքրական էին—որդ պատճառովէլ նա ունէր ընթերցողների ահագին շրջան։ Միշտ անկեղծ ու չետակալիօս, շատ անգամ կծու ու ոչ միշտ արդարացի—նա լամենալին դէպս բաց ճակատով էր ասպարէզ գալիս և երբէք չէր դաւաճանում իր սկզբունքին՝ լոյս ժողովրդի համար։ Երիտասարդը սիրում է ալդ տեսակ տրիբուն գրողներին և ուրախութեամբ հպատակում է նրա բարոյական ազդեցութեանը։ Եւ ճիշտ՝ վերջին ժամանակուալ ոռու հրապարակախօսների մէջ Միխայլ լովսկին բռնում էր եզակի տեղ իր խօսքի ոլժով, ազդեցութեամբ և ժողովրդականութեամբ։ Նա եկաւ բըռնեց ալն տեղը, որը բաց մնաց աւելի ևս բազմակողմանի, աւելի ևս տաղանդաւոր ոռու քննադատ հրապարակախօսի, որ շատ շուտ ստիպուած եղաւ հեռանալ գրական—հասարակական ասպարիզից։ Խօսքա Զեռնիշեսկու մասին է, որի մահուան տասնեւհինգամեակը նորերս կատարեցին և այդ առթիւ գուցէ առաջին անգամ կարողացան վերջապէս ասելու, թէ որպիսի հազուագիւտ գանձ է կորցըրել ոռու հասարակութիւնը լանձին Զեռիշեսկու։

թ.

Արդէն մի անգամ գրել էր, թէ հայտգէտ պ. Իւրի Վեսելովսկին առանձին գրքով հրատարակելու է իր մի քանի լոդուածները հայոց գրականութեան վերաբերեալ։ Յօդուածների ալդ ժողովածուն լուս է տեսնելու տարուալ վերջում Ռոստովում։ Յօդուածներն են՝ ա. Ներսոսական շրջանի գրական գործիչը, ալսինքն Եղիշէ վարդապետը. բ. Ֆրանսիացի հռչակառը գրող Կորնէլիլը և հայերը, գ. Վենետիկի Մխիթարեան վանքը դ. ՏԻՀ-ըդ գարու հայոց բանաստեղծութիւնը, ուր բե-

բուած են լինելու Վեսելովսկու թարգմանած բազմաթիւ ոտանաւորներ. ե. «Հիւսիսափալլը» և նրա շրջանը, գ. Արևմտեսն ազդեցութիւնը ուսուահայ գրականութեան մէջ — մի գեղեցիկ ուսումնասիրութիւն. է. Կըթութեան հարցեր հարց գրականութեան և մամուլի մէջ. ը. Երգիծաբանական տարրը հայ գրականութեան մէջ. թ. Կանանց տիպեր հայ գրականութեան մէջ. ժ. Հայ գրողները և ոռւսաց ազդեցութիւնը: Այս լոգուածներից միմիայն վերջինը լուս չէր տեսած գեռ և նոր տպուեց Պյոս. Ենդ. լրագրի բանասիրականներում, մնացեալները լուս էին տեսել արդէն զանազան ժամանակ ոռւս մամուլի էջերում: Նոր լուս տեսած լոգուածը ներկայացնում է այն պատասխանները, որ ստացել է հայ հեղինակներից պ. Վեսելովսկին իր նըրանց ուղղած հարցերին: Հարցերն են եղել՝ «ունեցե՞լ է արդեօք ոռւս գրականութիւնը Զեր վրայ կամ Զեր գրուածքների վերայ ազդեցութիւն և ինչումն է ու ինչ շափով է տիդ երևացել Զեր գրուածքների մէջ»: Պատասխանները հետաքրքրական են և ապացուցանում են այն, որ մենք վաղուց է արտալայտել ենք մեր՝ «նոր-գարում» տպուած «գրական ակնարկներում»: այսինքն թէ մեր ոռւսահայ գրողների և թէ նրանց գրուածքների վերայ մեծ ազդեցութիւն է ունեցել ոռւս խօսքը, միտքը և հանճարը: Յօգուածը շատ իմաստալից է և արժէ թարգմանել հայերէն: Հեղինակներից մեզ անյալա պատճառներով պակասում են Պ. Պողեան, Դ. Բարխուդարեան, Մուրացան, Փափազեան, Ահարոննեան, Շանթ և ալին: Ցանկալի էր Սունդուկեանի, Աղյայեանցի, Լեօի, Նար-դոսի, Շիրվանզադէի, Ա. Խոսհակեանի, Յ. Յովհաննիսեանի, Յ. Թումանեանի, Աղ. Ծատուբեանի խոստովանութիւնների կողքին տեսնելև վերոյիշեալ դուրս մնացած հեղինակների պատասխաններն էլ. ալլ և աւելի երիտասարդ գրողների: Հետաքրքրական է նոյնպէս նոյն հարցի մասին ունենալ մեր խմբագիրների, հրատարակիչների և հրապարակախօսների պատասխաններն ևս: Այն ժամանակ կարելի է աւելի ուղիղ եղրակացութիւն անել այդ ազդեցութեան մասին, գիտել թէ որ ասպարիզի վերայ

աւելի երևացել այն և—որ գլխաւորն է—տարիների ընթացքում ինչպիսի ձեւ և բովանդակութիւն է ստացել այդ ուստական ազգեցութիւնը։ Այդ տեսակ «հարցուփորձ» կարող է այնպիսի տեսարաններ քանալ մեր առաջ, որոնց մասին շատերը գուցէ չեն էլ կասկածում։

Յամենալին դէպս կղզիացած ապրելը—մահ է ամէն մի ազգութեան համար. թող ուրեմն ազատ ներգ գործէ մեր վրայ օտար ազգեցութիւնը, միայն որ մենք ունենանք ներքին ոյժ՝ մերազնացնելու օտար տարրերը և արդպիսով ճոխացնելու մեր ինքնուրոյն հանճարի արտադրութիւնը։ Դա է նպատակն ամէն մի ազգութեան առանձին ինքնուրոյն գորութեան։

Գուցէ անտեղի չի լինի բերել այստեղ նշանաւոր ուստ պրոֆէսօր Գրադովսկու դասախոսութիւնից հետևեալ կառըը<sup>1)</sup>. «Գիտութիւնը չի ժխտում այն զաղափարը, որ ամէն մի ազգի մտաւոր, բարոլական և տընտեսական կեանքի կարեսորագոյն արդիւնքները դառնում են բոլոր ուրեց ազգերի սեփականութիւն։ Բայց պատմութիւնը անհերքելի փաստերով ապացուցանում է, որ այդ արդիւնքներից ամեն մէկը կարող էր երևան գալ ազգային պատմութեան հողի վերայ. որ Փիդէասի արկածները և Պղատոնի փիլիսոփայութիւնը—յունական ստեղծագործութիւն էին, որ հոռվմէական իրաւունքը—հոռվմէական պատմութեան արդիւնք է, Անդիշալի սահմանադրութիւնը—նրա ազգային սեպհականութիւնը։ Այդ չի արգելում նրանց համամարդկալին նշանակութիւն ունենալ, ազգել բոլոր աշխարհի գեղարուեստի, փիլիսոփայութեան և քաղաքականութեան վերալ։

Յանուն համամարդկալին քաղաքակրթութեան լիակատարութեան—բոլոր ազգերը կոչուած են գործունէութեան և կեանքի՝ որ միաչափ հեռու է լինելու թէ կղզիացած մեկուսութիւնից եւ թէ կոյր նմանողութիւնից։ Ազգալին ստեղծագործութիւն—ահա ամէն մի ազգի բնական նպատակը, և առանց այդ նպատակի

<sup>1)</sup> А. Градовский. Національный вопросъ въ исторіи и въ літературѣ. №ы 11—12 Երև.

կարող չէ տեղի ունենալ մարդկալին ցեղի կատարելագործութիւնը՝ Սպանել ժողովրդի (ազգի) ստեղծագործող ոլժը—նշանակում է սպանել անհատի անձնական ձեռներիցութեան ոլժը: Բոլոր ազգերը և ցեղերը ենթակալ անել մի ամենափրկիչ քաղաքակրթութեան, նոյնքան վնասակար է ազգում միջազգալին կեանքի վերալ, որքան ամենափրկիչ վարչական կենդրունացումը—երկը (ժողովրդի) ներքին կեանքի վերալ: Կարծեմ բաւական է:

ՄԻՆ. ԲԵՐԲԵՐՍՅԱՆ

Նոյ-Նախիջնան

1904